Ս. Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱԶԱՐԱՇԵՆԸ ԵՎ ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հայաստանի ժողովրդական բնակելի տների գմբեթաձև ծածկերը, որոնք գալիս են հնագույն դարերից, կառուցվել են երկու հիմնական տարբերակներով շինված փայտյա կմախքի վրա։ Առաջին տարբերակը, առավել հասարակ ու պարզ ձևի, կազմվել է տան պատերին զուգահեռ դրված և աստիճանաբար դեպի երդիկը փոքրացող գերանների շրջանակներից և նրանց միջտարածություններ ծածկող ճեղքված փայտի անտաշ կտորներից։ Այս ձևը մասսայական տարածում է ունեցել, շինարարական փայտով համեմատաբար հարուստ, հյուսիս-արևելյան շրջանների և Ճորոխի հովտի ու Ղարաբաղի գյուղերում։ Այն ճանաչվում է մի քանի անուններով՝ կոնդածածկ, սողոմածածկ, սողոմաշեն, ավելի հաճախ ղառնավուշ, ղառնաղուշի[1] և համահնչուն այլ անուններով (նկ. 1)։

Գմբեթածածկի փայտյա կմախքի երկրորդ տարբերակը իրականացվել է բազմակողմանի և բազմանկյունանի՝ աստիճանաբար դեպի երդիկը փոքրացող կարճ հեծանների կամ գերանների շրջանակներից (նկ. 2)։ Այս տարբերակով ծածկերը տարածված են եղել փայտազուրկ, ձյունառատ ու անձրևոտ շրջաններում և ամենից շատ Բարձր Հայքում, այն ճանաչվում է Հազարաշեն կամ Հազարաշենք անունով։ Ամենից շատ այս անունը գործածել են Կարնո, Բայազետի, Բուլանխի, Բասենի, Մուշի, Ալաշկերտի, Սեբաստիայի, Բայբուրտի, Դերջանի, Սասունի, Լենինականի, Ախալքալաքի, Ախալցխայի և սրանց հետ առավել կամ նվազ չափով հաղորդակցության մեջ գտնված շրջանների բնակիչները։ Բացի այս, Հազարաշենին դաստածածկ են ասում Ղուկասյանի և Լենինականի մի քանի գյուղերում, սողոմաքաշ՝ Եղեգնաձորի, Լոռու, Շապին-Բարահիսարի շրջաններում, Ալավերդում՝ Սողոմաքաղ, մի քանի այլ վայրերում՝ սյուրմաքաշ և շուշածածկ և այլն։ Այս անունները հաճախ խառնաշփոթ կերպով վերագրվում են մերթ այս, մերթ այն ծածկին։ Այդ աղավաղումները առաջացել են բնակչության մեջ շարունակ տեղի ունեցած տեղաշարժերի և վերաբնակման հետևանքով։ Այնուամենայնիվ, նրանց մեջ ամենից ժողովրդականը և անաղարտը մնացել է Հազարաշեն անունը, որը առաջացել է ծածկը «հազարավոր» փայտի կտորներով շինված լինելու պատճառով։

Հազարաշենի տարբերակով են ծածկվել սովորաբար քառակուսի ձևի հատակագծով տները, և այլ ձևի տներում՝ քառակուսու բերված կենտրոնական բացվածքները։ Հազարաշեն այս ծածկը ձևակերպվել է տան կամ նշված բացվածքի անկյունները հատող և պատերին զուգահեռ ութից-տասներկու անկյու-

---

[1] *Արարերեն ղառնա-թև, ղուշ-թռչուն անունից, կապված երդիկից ներս թռչունների բների դոյության հետ։*

նանի շրջանակներով, որտեղ փոքր շրջանակները հենվելով իրենց նախորդ մեծ շրջանակների վրա տանիքի գագաթին, ձևակերպել են երդիկի բացվածքը (նկ. 3)։ Որոշ դեպքերում ութկողմանի առաջին շրջանակին հաջորդել է տան անկյուններին կամ պատերին զուգահեռ քառակուսի շրջանակը, որից հետո կրկին ութկողմանին և այսպես դարձյալ մինչև երդիկը (նկ. 4)։ Երբեմն ութկողմանի այս շրջանակները սկզբից մինչև վերջը աստիճանաբար փոք-



Նկ. 1. Սողոմածածկ կամ զառնավուճի կոչված ծածկի ներքին տեսքը։

բանալով զուգահեռաբար են բարձրացել (նկ. 5)։ Կան նաև փոքր ինչ այլ ձևափոխումներով հաղարաշեններ (նկ. 6)։ Այստեղ հիմնական շրջանակների միջև ընկած բաց տարածությունները փակվել են մաքուր տաշված ու վերին աստիճանի խնամքով դասավորված տախտակներով։ Շատ դեպքերում, ինչպես շրջանակները, այնպես էլ տախտակները պճնվել են զանազան հետաքրքիր փորագրական քանդակներով։ Ժողովրդական վարպետներն իրենց ջանքերը չեն խնայել հաղարաշենի առաստաղը ոչ միայն գեղատեսիլ, այլև հնարավորին չափ թեթև դարձնելու համար։ Հայ և օտար ականատեսներից շատերը հիացել են ճարտարապետական այս ուշագրավ հանգույցով։ «Գյուղական տների մեջ,—գրում է Թ. Թորամանյանը,—թեև պարզ ձևեր շատ կան, բայց ոմանք այնքան զեղեցիկ, բարձր ու ճոխ շինվածք ունեն, որ հիացում կպատճառեն դիտողին, երբեմն արտակարգ սիրով նույնիսկ բանդակագործված են փայտերը»[2]։

2 Թ. Թորամանյան, Հայկական ճարտարապետություն, հ. I-ին, Երևան, 1942, էջ 89։



Նկ. 2. Հազարային կոչված ծածկի ներքին տեսքը (լուսանկար և գծագիր)։

Հազարաշենի հիմնական առավելությունը կայանում է նրանում, որ այն իրականացվում է ավելի քիչ և աւ-ավել կարճ փայտե հեծաններով կամ դերաններով։ Դրանք ավելի նպաստակահարմար են անձրևաջրերի արագ հեռացման համար, քան նախորդ տարբերակը։



Նկ. 3. Հազարաշեն ծածկ, առաստաղի կողմից դրված։

Հազարաշեն և մյուս տարբերակով կառուցված գմբեթները իրենց արտաքին տեսքով անմիջապես չեն ճանաչվում, ճիշտ է, երկու դեպքումն էլ նրանք հողածածկ են, բայց միայն մոտիկից դիտելու դեպքում է դրանց տարբերությունը նկատելի։ Հազարաշեն գմբեթները ավելի սրածայր ու բարձր՝ հատած կոնի ձև ունեն, իսկ մյուսները ցածր ու տափակ կիսագնդի ձև։ Իրենց արտաքին միաձևության պատճառով ամենուրեք կոչվել են գուպպա, գուպպե, խուպպա, կուբբե և համահնչուն այլ անուններով։ Արական լեզվով գմբեթ անունն են գործածում։ Որոշ տեղերում այս գմբեթածածկ տներին կոչել են գուփով ծածկ, գուփով տուն, խուփեածածկ, թակարածածկ, բլրածածկ, թոնրածածկ, չարտախելու ծածկ և այլ անուններով։ Մի շարք հնագույն ժողովուրդներ համանման անուններով են կոչում գմբեթը։ Այսպես, օրինակ, վրացիները կումբաթի (гумбати) են ասում, պարսիկները գյումբաթ (gunbad), իտալացիները կյուպոլա (cupola), ֆրանսիացիները կուպոլ (coupole), ա-

բաները գյուբբա (gubba) և այլն[3]։ Այս նշանակում է, որ գմբեթի անուն ինչ-որ ընդհանուր շրթայի մի օղակն է հանդիսացել կամ առաջացել է փոխադարձ ազդեցությունների մի հանգույցից։ Այդ հանգույցը դեռևս գտնվում է պատմության աղջամուղջում։



Նկ. 4. Ութկողմանի և չորսկողմանի շրջանակներից կազմված հաղարաշին։

Սակայն որոշակի է այն, որ Հայաստանում քարաշեն գմբեթների ու կամարների նախնական ձևերը երևում են դեռևս բարե դարերից մեզ հասած օղուղների տների տարբերակներում, այնուհետև նաև ուրարտացիների շինարվեստում։ Օղուկների տները, որոնք տարածված են եղել Հայաստանի տարբեր վայրերում՝ Օշականում, Սիսիանում, Արագածի լանջերում և այլուր, կառուցված են քառանկյունի երկարավուն և քառակուսի ու երբեմն նաև շրջանաձև հատակագծով։ Քառանկյունի ձևի տներում երկու երկար զուգահեռ պատերի հորիզոնական անտաշ ու անշաղախ քարի շարքերը աստիճանաձև առաջակարկառ դասավորությամբ խոնարհվելով դեպի ներս, այնքան են նեղացրել ծածկի թռիչքը, որ առավել չափով հեշտացել է կարճ սալաքարով ծածկելու

3 Ս. Վարդանյան, Հայաստանի ժողովրդական բնակելի տների հարտարապետությունը, Երևան, 1959, էջ 122։



Նկ. 5. Զուգահեռաբար դասավորված շրջանակներից կազմված հաղարաշեն։



Նկ. 6. Հաղարաշեն ծածկի տարբերակներից։

գործը։ Այս սալաքարը մոտավորապես կատարել է այն դերը, ինչ կամարների կամ բարավորների կոնստրուկցիաներում կատարում է փական քարը։ Այս ձևի պատի շարվածքի և ծածկի մեջ պետք է որոնել կամարաձև կառուցվածքների արմատները (նկ. 7)։ Ուրարտացիների մոտ կամարաշինության այս

Նկ. 7. Օշականի օղուզների տներից. ա—արտաքին տեսքը, բ—հատակագիծը (վերականգնված)։

սկզբունքները երևում են ներքնոլիների, փակ ջրատար առուների կառուցվածքներում։ Միևնույն մոտեցումով լուծվել են նաև բառակուսի կամ շրջանաձև հատակագծով օղուզների տները, որտեղ տանիքի կենտրոնական բացվածքը այնքան է փոքրացվել, որ միանգամայն հնարավոր է դարձել մեկ-երկու սալաքարով ծածկել այն։ Այս ձևերումն էլ պետք է որոնել գմբեթի ծածկի արմատները։

Օղուզների տների ծածկի ձևերը երևում են նաև հնագույն բարաշեն դամբարաններում[1]։ Ուրեմն հավանական է, որ, ինչպես ենթադրել է Ժ. Լիսից-

[1] J. Morgan, Mission Scientifique au Caucase. Lyon, 1882.

յանը՝, օղուզների տների նախնական շինարարական բարի այս ձևերը փոխանցվել են փայտաշեն ծածկերի տարբերակներում և աստիճանաբար զարգանալով հիմք են հանդիսացել ավելի ժամանակակից կատարելագործված հաղարաշեն տիպի գմբեթների։ Օղուզների տների կառուցողական այս հնարա-



Նկ. 8. Առարկոց վանքի ներքին տեսքը։

մտությունը պետք է համարել Հայաստանի նախապատմական շրջանի շինարար մարդկանց ամենաարժեքավոր ստեղծագործությունը։ Հավելի է, որ սրանց վերջին նմուշները ևս, անուշադրության մատնված լինելու պատճառով, հողմացրիվ են լինում։

Իհարկե, հաղարաշենի կամ սողոմաշենի գմբեթի ձևերը չպետք է վերագրել միայն հայկական ժողովրդական ճարտարապետությանը, դրանք տարածված են նաև Վրաստանում, կովկասյան և ասիական հնագույն այլ ժողո-

---

5 Ст. Лисициан, Кошун-даш. Мегалитическое городище в Сисиане (Зангезур), Тифлис, 1927, էջ 716։

վուրդների մեջ[6] և բխում են հնագույն դարերի ժողովրդական ստեղծագործության թյուններից[7]։ Սակայն ժողովրդական շինարարական այս ձևերի ազդեցության թյունն ավելի ակնբախ երևում է հայկական աշխարհիկ և եկեղեցական ճարտարապետության մեջ[8]. դրանց կիրառումը առանձնապես երևում է ժամա-

Նկ. 9. Հայկական եկեղեցու ներքին տեսքը, ըստ Լինչի։

տներում[9]։ Այլ խոսքով ամենից ուշագրավն այն է, որ ժողովրդական տների ազդեցությունը մոնումենտալ ճարտարապետության վրա առավել չափով նկատելի է հայկական ճարտարապետության մեջ։ Այստեղ ոչ միայն ժողովրդական բնակելի շենքերը, այլ նաև հասարակական, եկեղեցական և այլ բնույթի շենքերը ծածկվել են ինչպես քարե, այնպես էլ փայտե հաղարաշենի տարբերակներով։ Այս կոնստրուկցիաների ծագման ու տարածման հիմնական դրդապատճառը հանդիսացել են տեղում եղած շինանյութերը՝ շինափայտի պակասը և քարի առկայությունը, ինչպես նաև բնակլիմայական պայմանները՝ հաճախակի տեղի ունեցող երկրաշարժային ցնցումները, ձյան հաստ շերտերից ու հորդառատ անձրևներից կառույցվածքը պաշտպանելու պահանջները։ Մոնումենտալ կառուցվածքներից մեզ հասած օրինակներում բարե հեծաններով են կառուցվել Գետաշեն գյուղի Առաքելոց վանքի ժամատան դմբեթը

6 М. Ильина, Древнейшие типы жилищ Закавказья. Москва, 1946, էջ 22։

7 Р. Агабабян, Композиция купольных сооружений Грузии и Армении, Ереван, 1950, էջ 69։

8 Վ. Հարությունյան, Դվինի 5—7-րդ դարերի ճարտարապետական հուշարձաններ, Երևան, 1950, էջ 69։

9 С. Мнацаканян, Архитектура армянских притворов, Ереван, 1952, էջ 110։

(նկ. 8), Սաղմոսավանքի, Արգինայի, Գեղարդավանքի ժամատների և Նոր Գետիկի գանձատան և մի շարք վանքերի սեղանատների, քարավանատների ծածկերը և այլն։ Ըստ Թորամանյանի փայտաշեն են եղել Տեկորի տաճարի չորս սյուների վրա հենված գմբեթի սկզբնական օրինակը, այնուհետև Հռիփսիմեի, Էջմիածնի կաթողիկե ի և մի շարք այլ եկեղեցիների սկզբնական գմբեթները[10]։

Փայտաշեն հազարաշենով են կառուցվել Վանի մի քանի եկեղեցիներ, այդ թվում ամենից հայտնին՝ Այգեստանի Հայկավան եկեղեցու գմբեթը (նկ. 9), որի մասին մեծ հիացմունքով է խոսել անգլիացի հայասեր Լինչը[11]։ Հազարաշեն ծածկ են ունեցել Դվինի պատրիարքարանը, Գրիգոր Մամիկոնյանի պալատի դահլիճը[12], Էրզրումի քարավանատունը և ուրիշներ։ Դեռևս անցյալ դարում ժողովրդական բազմաչքանի շատ տների որոշ բաժիններ ծածկում էին հազարաշենով։

Հազարաշենի ներքին տեսքը իր գեղեցկությամբ իրավունք է տալիս ենթադրելու, որ հայ թագավորների, իշխանների և այլ հարուստների պալատներում որոշ դահլիճներ, հարսանյաց տներ և ժողովասրահներ նույնպես ծածկված են եղել հազարաշենի կոնստրուկցիաներով։ Ժողովրդական վարպետները, անշուշտ, դրանք կառուցել են ավելի շքեղազարդ ու ամուր ձևերով, քան, ասենք, հասարակ մարդկանց տները։

Մեր ժամանակներում շատերը գմբեթի ճարտարապետական ձևերը կապում էին միայն կրոնական շինարարության հետ և այս առիթով աննպաստ հասարակական կարծիք էին ստեղծում դրանց նկատմամբ, որի պատճառով թերագնահատվում էր ու անտեսվում նրանց ժողովրդական դրական կողմերը։ Քչերն են մտահոգվել ճարտարապետական այս կոնստրուկցիայի փորձից օգտվելու և վերամշակելու գործով։ Պրոֆ. Ն. Աղաբաբյանը 1950 թ. հրատարակած իր աշխատության մեջ լրջորեն առաջ է քաշում քաղաքաշինարարության մեջ գմբեթավոր շենքերի օգտագործման հարցը[13]։ Ներկայումս, մեր կարծիքով, հազարաշեն ձևերի գմբեթները կարելի է օգտագործել նրա խնայողաբերության, առատ լույսի և ուղղակի ընկնող արևի ճառագայթների ներթափանցման համար ունեցած հնարավորություններից։ Բացի այդ, ժամանակակից թեթև տեսակի շինանյութերից գործարաններում երկաթբետոնի հավաքովի ձևերով գործադրված, պլաստմասսաները, ապակին և ալյումինը լայն հնարավորություններ են ընձեռում հազարաշեն ձևը դարձնելու ավելի թեթևաշեն, վերաորակավորելու այն և կիրառելու մի շարք շենքերում։ Կարելի է այդ ձևով ծածկել, օրինակ, առանձին կառուցված ցուցահանդեսներ, պարասրահներ, խաղասրահներ, առանձնացված կաֆե-ռեստորաններ, ճեմասրահներ, բուժական և հիվանդանոցային արևաբուժման դահլիճներ, սպորտ սրահներ, տաղավարներ, փակ շուկաներ, լաբորատորիաներ, գործարանային որոշ արտադրամասեր, ժողովասրահներ և այլն։ Ճարտարապետական այս հատվածը շատ տվյալներ ունի քաղաքաշինարարության մեջ հետաքրքիր ու գեղեցիկ անսամբլներ ստեղծելու տեսակետից։ Վերածննդի դարաշրջանում

---

10 Թ. Թորամանյան, Հայկական ճարտարապետություն, հ. I, Երևան, 1942, էջ 89։

11 Х. Ф. Линч, Армения, путевые очерки и этюды, Тифлис, 1910, էջ 131։

12 Վ. Հարությունյան, 7-րդ դարի աշխարհիկ ճարտարապետության մի նոր հուշարձան, Հայկական ՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1953, № 8։

13 Նշված աշխատությունը, էջ 117։

բացի մոնումենտալ հուշարձաններից, բնակելի տների որոշ բաժանմունքներ՝ ֆոյեներ ու ընդունարաններ, դահլիճներ ծածկվում էին գմբեթներով, որոնք առավել չափով հոյակապ ու շեշտակի էին դարձնում կառուցվածքը։ Անշուշտ, հազարաշեն գմբեթի ձևերը ոչ թե պիտի ընդօրինակել մեխանիկորեն, այլ քննադատաբար մշակել, այնպես, որ նրանք հարազատորեն ներդաշնակ կերպով առնչվեն, արտահայտվեն տվյալ շենքի ճարտարապետական ընդհանուր ձևերի ու բովանդակության հետ, որը միանգամայն հնարավոր է։

С. В. ВАРДАНЯН

АЗАРАШЕН И ЕГО ЗНАЧЕНИЕ В АРМЯНСКОЙ АРХИТЕКТУРЕ

Резюме

В данной статье рассматривается влияние и содействие архитектуры деревянных куполов народных жилых домов Армении на монументальные сооружения.

Постройка деревянных куполов жилых домов осуществлялась в основном двумя способами.

Первый, когда деревянные купола поднимались ступенчатыми, постепенно уменьшающимися квадратами, балки которых располагались параллельно стенам. Такие типы куполов нашли свое применение в районах, богатых древесиной и имеющих умеренный климат. Эти купола имеют в народе множество наименований, в том числе и «согомашен».

Во втором случае купола строились из коротких бревен, которые постепенно ступенями уменьшались и имели вид многоугольника. Исходя из характера конструкции, построенной из множества бревен или досок, этот вид купола называли «азарашенами».

«Азарашены» нашли свое применение в районах многоосадочных и бедных древесиной. Следует отметить, что эти купола более крутые и высокие, чем первые.

В статье подчеркивается, что основа этих куполов восходит к конструкции домов типа «огузов», образцы которого сохранились и до наших дней. Дома с такими куполами строились не только в Армении, но и в других странах Закавказья и Азии.

Подробно исследуя и анализируя «азарашены», а втор приходит к выводу, что купола многих древних церквей отстаивались в виде деревянных азарашенов. Этот же вид конструкции сохранился и при строительстве каменных куполов церквей, их притворов, караван-сараев, столовых и т. д.

В статье приводятся примеры дошедших до нас деревянных (айкаван) и каменных (аракелоц) «азарашенов».

Распространенность этого вида построек в армянской архитектуре объясняется главным образом своей экономичностью и красотой.

Автор считает, что такие покрытия возможны, а в некоторых случаях даже целесообразны и в современной архитектуре, с применением новых строительных материалов.